

## Ա. Ռ. Թ Ի Ա Վ Ե Ր

կարկաշահոս՝ այս պուրակէն դալարուն՝  
կը փախչիս գուն տարօրէն.  
Ոհա կու գամ ես քու ձայնիդ օրորուն  
Լըսէլ յանկերգ մը նորէն:

Եւ նորէն զու նոյն ուղիով կը հոսիս  
Շըրթունքիդ երգ մ'յարատեւ.  
Եւ ամէն օր գուն կը կանչես ափիդ զիս  
Որ ունենամ բաղձանք, թէն:

Որքան բարի, անյիշաչար ես, առուակ.  
Օր մ'երբոր ես դալկահար  
Գաւազանով մը ծեծեցի ջուրդ ու ակ՝  
Պահ մը չանցած ժըպաեցար:

Եւ կը յիշեմ երբոր տըխուր ու մենիկ  
Հին օրերուն մէջ պայծառ  
Եկայ ափիդ որրել հոգիս իմ ծաղիկ  
Գուն ալ ինձ հետ յուզուեցար:

## Մ Ա Յ Յ Յ Ա Վ Ո Թ Ո Ւ Յ

Մայր, աղօթէ որդւոյդ համար անտեսուած,  
Երբ վերջալոյսն իր տրամութեամբը մարի.  
Մայր, կ'ուզեմ որ քնքուշ հոգիդ սրբացած  
Ինձի համար տաճարին մէջ լուս հիւծի:

Միթէ ի զուր սեւ խաչերու փարեցայ  
Որ գէթ լըսէմ պայծառ խօսքերն Յիսուսին:  
Ի զուր, ի զուր տեսայ իյնալի արցունքին:  
Մայր, աղօթէ...: Հոգիս դարձեալ կը հեւայ  
Եղած կրքիս ճիրանին մէջ խաղալիկ.  
Գէթ դուն զըթաս, բազմաչարչար իմ մայրիկ:

## ԵՐԿԱԶԱԳԱՐԱՄԵԱԿ ՄԸ

ՎԻՐԳԻԼԵԱՆ ՏԱՐԻՆ — ՎԻՐԳԻԼԵԱՆ ՇՈՎԱՊՏՈՅԵՅ

ՎԱՐՊԵՏՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏԲ — ՎԻՐԳԻԼԵԱՆ ՇԱԽԵ

(Շաբ. տես Բազմավէպ 1930, էջ 533)

## Բ — Վ Ի Բ Գ Ի Լ Ե Ա Ն Ծ Ո Վ Ա Պ Տ Ո Յ Տ Ը Ը Ը

Եւ որպէս զի Լատին մշակոյթէն սհ-  
րած քոյր ազգերուն զարգացեալ եւ բա-  
րեկիրթ շառաւիզներուն հաճոյալի առիթը  
արուելը, իրենց ընտանեկան խենն ու  
քիշնը թողած, գալ հաւացուկլ մեծն վիր-  
զիսի յիշատակներուն շուրջը, եւ վիր-  
զիսի յիշատակներուն վարչական պարզ-  
մեծ փայլ մը ստանար, այս եւ ասոր  
նման ազնիւ զիտաւորութեամբ, խտալա-  
կան նորընտիր Ակաղեմիային թելագու-  
մով, խտալական նաւային դաշնակցու-  
թեան կողմանէ վիրզիլեան ծովապտոյտ  
մը կազմակերպուեցաւ, թրինտիզի ծովա-  
պտաքը որոշելով ընդհանուր հաւաքումին  
կերպնավայր:

Հին թրինտիզիումի տրուած այս նա-  
խապատուութիւնը մէկէ առելի պատմա-  
կան դէպքերու հետեւանք էր:

Նախ եւ առաջ՝ որովհետեւ, այդ բա-  
րեին մէջ վիրզիլիս մեռած է, Աթէն-  
քէն ի գարձին, Փրկչին թուականէն 19  
տարի առաջ, բաներկու Սիպտեմբերին.  
Ճիշտ այն ամսոյն մէջ, որ մեզի յոյժ ըզ-  
ձալի թուեցաւ, եւ է իսկապէս, որ Լա-  
տին վեհ Քիրթողին յիշատակին ընծայ-  
ուէր, իթէ, եթէ կ'ըսեմ, հայու մը ձայնը  
զօրաւոր արձագանգ տալու կարող ըլլար  
Աշխարհիս: Ինչ որ շատ տարակուսելի է.  
Հանի որ նա իր ազգային դատը չի հաս-  
նիր լսել տալ սրտերուն:

Ինչ որ է, թրինտիզի քաղաքը, այս  
պատմական յիշատակութենէն զատ, մե-  
ծամեծ ծառայութիւն մատուցած է Աս-  
տիւմի ծովամարտին ժամանակ, նպաստե-  
լով Օգոստոսի յաղթութեան, որուն վեր-  
ջապէս պիտի մնար, թեկնածուներու բար-  
ձումով, կայսերական ծիրանիին փառքը:  
Մարկոս Անտոնիոսին պարտութեամբ, կը  
վերջանային տոհմային կոփմերը եւ Հռոմ  
կը հռչակուէր, բաղացներուն գերազանցը,  
կը հռչակուէր, Տիեզերակալ Մայրաքաղաք: Տիտ-  
Մրես, Տիեզերակալ Մայրաքաղաք: Տիտ-  
գորութեամբ:

Թրինտիզի ծովալճին հանդիպակաց եւ  
զերբին մօտ էր ուր կատարուած էին Ան-  
գիւսի զաւակին մասին Ենէսկանի մէջ  
յիշատակուած գուշակութիւնները. Դելեան  
պատգամէն սկսեալ, եւ Ենէսկանի միատեղ  
տարած ընտանի թերափիներուն յայտնու-  
թիւնը, եւ նամանաւանդ չեղինոս, Բութը-  
տինի արքային, Պրիամոսի հմայ զաւակը,  
վիրջին գուշակութիւնները, որոնք իր բե-  
նեկալին հաղորդեց, անոր մեկնելէն առաջ:  
Նովին գործով, վիրջապէս, կ'ամբող-  
ջանային վիրզիլիսին ալ բոլոր իդաերը  
եւ նպատակները, որոնց յաղողութեան  
համար Դիցարանութենէն փոխ առած էր  
Ենէսկանի ողիսականը, որպէս զի Հռոմայ